9(47.925)1
Ճ-16
347.925
[illegible] Է 1981 թ.

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Արիոն կացէ՛ք. ուր չկայ լեզու և գրականութիւն, մեռած կենանքի լարութիւն էլ չի կարող լինել։

(Էր. 63)

Ա 34032 II
Ճ 211.2
[illegible]

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ.
1903.

Մի քանի խօսք

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Գլ. Ի.

Պատմութիւնից յայտնի է, որ եթէ այս և այն ազգի անտեսական և միւս կուլտուրական աղբիւրները սկսում են ցամաքել, հետևարար նրանց զորձիչներն էլ ներկայանում են ինչպէս «լէնալ, լը-ֆէնալ և անֆատալը-ֆէնալ» [1]) *— այն ժամանակ ազգերին անխուսափելի մահ է վրայ հասնում։ Բայց ազգերի մահը, մանաւանդ փոքր ազգերի, միշտ էլ չի հետևում բնական օրէնքին. այդպիսի ազգը, առաջ ենթարկուելով զօրաւորի շարունակ հարուածներին, ապա կորցնում է միայն իւր ինքնուրոյն կացութիւնը։ Բայց որոմ-հետև այդպիսի ազգը դեռ կենդանի է հոգով ու մարմնով, անդադար փորձ է փորձում նորից ձեռք բերել անկախ կեանք։ Մենք հին օրինակ-*

[1]) «Երեսի վերայ ընկած, ջլատուած ու քայքայուած». Դ. Փ.

ներից առնենք միայն մինը, — այն, որ մեզ է մեր սրտին։ Ցայտնի է, որ Վարդանանց նահատակութիւնից յետոյ թէպէտ Պարսիկները յաղթեցին ու նուաճեցին Հայերին, բայց նրանց մէջ չհանդաւ ազատութեան շունչը, որը, այն ժամանակից սկսած, մոխրի տակ ծածկուած խանձողի պէս երկար ոգևորել է ազգի ընտրեալներին։ Այսպէս Վարդանի եղբօրորդին, Վահան Մամիկոնեան, շարունակեց Վարդանանց գործը և, Բուրերի Դէվէտ ու Բօտա զօրավարների պէս ձիգ կռիւներ մղելով ու հարիւրներով Պարսիկների հազարները ջարդելով, վերջ ի վերջոյ նրանց Վազարշ թագաւորին ստիպեց խաղաղութիւն հաստատել և իւր պահանջած արտօնութիւնները ստանալ։ Այստեղ խոստ հետաքրքրելի կ՚լինի ընթերցողին ծանօթացնելու այն հանգամանքի հետ, թէ Վահան ինչ եղանակով կարողացաւ ձեռք բերել այդ արտօնութիւնները։

Վազարշ թագաւորը հարցնում է իւր Միհրան զօրավարին, թէ ինչ կասես Հայոց գործի մասին. ինչ առաջարկիր այնտեղ Հայոց աշխարհում?

Միհրանը պատասխանում է. էլ մի հարցնիլ, թագաւոր, թէ ինչ բերաւ մեր գլխին Վահան։ Հաւատալու բան չէ, թէ ասեմ, որ Վահան մի օր մի քանի հարիւր մարդով, աներկիւղ յարձակուելով մեր երեք հազարի

վերայ, բոլոր զօրքը ջարդ ու փշուր արաւ. մշակների պէս լաւ սրած մանգաղով ու գերանդով բոլորին հնձեցին և խուրձ-խուրձ միմեանց հետ դարսեցին։ Աւելի զարմանալին այն էր, որ երբ վերայ հասաւ մի մեծ զօրախումբ մեր կողմից, նրանք ձիանը էլ յետ չքշեցին և ոչ էլ փախան, այլ հէնց մեր թեւին կպած, երկար ժամանակ կիր, գնում էին մեզ հետ և ոչ ոք չհամարձակուեց մեզանից անգամ մոտիկ անել նրանց երեսին։ Երբ որ Վահանին հարցրին թէ դու ինչպէս էիր յանդգնում մի քանի հոգով այնքան բազմութեան դէմ դուրս գալ, նա ի միջի այլոց ասաց. «Պարսիկների Պերոզ թագաւորը (Վաղարշի մեծ եղբայրը) միշտ և հանապազ ականջ դնելով օջաղից փախած Հայերի խօսքին, որոնք գետին էլ չէին մնում և հաւատացնում էին, որ Հայերը անպիտան ազգ են և կռուի ժամանակ վախկուկ, թագաւորն էլ անդադար կրկնում էր նրանց սուտումուտ խօսքերը։ Բայց որ իսկ Հայն էր և սրտումը ամօթ կար, այդպիսի նախատինք լսելով, ոչ թէ միանգամ պիտի մեռնէր, այլ թէ տասն անգամ էլ նորից կենար, տասն անգամն էլ նորից պիտի մեռնէր։ Մենք էլ մտածեցինք, որ եթէ Պարսիկների շատութիւնից զարհուրենք և թաքուն փախուստ տանք, անտարակոյս, կ՚հաստատուի մեր մասին ասածը։ Մենք էլ վճռեցինք առաջ

ցոյց տալ թէ ովքեր ենք և յեռոյ ազգուտակով կորչել»։ Միհրանին շատ դուր եկաւ այս լուրջ և գեղեցիկ տրամաբանութիւնը և խորհուրդ տուաւ Վաղարշին հաշտուել Վահանի հետ։ Վահանն էլ, խորհրդակցելով իւր համախոհների հետ, համարձակ առաջարկեց այս երեք պայմանը.

1) «Առաջին խնդիրը այն է, որ մեր լեզուին ու կրօնին ձեռ չտաք և ոչ մի հայ մարդ մոգ չշինէք և ոչ էլ մի ուրացող հայի պատուի ու մեծութեան չհասցնէք, որովհետև դրանցից իշխան նշանակելով Հայաստանի վերայ, մի որ, գալիս են անբարոյականացնում ժողովուրդը, նրանց մէջ խաւար տարածելով և մոքի ու գիտութեան արդիւնքը արհամարհելով. և երկրորդ, եթէ մի աշխարհի կառավարիչը անպիտան է, այն աշխարհին անկարելի է առաջադէմ և անուանի լինել»։

Այս պայմանով Վահան զլխաւորապար շեշտում է այն դատապարտելի հաւատափոխութիւնը, որ զոգ և զաղտաշուրջ Հայերից շատերը յանձն էին առնում և որը Պարսիկների կողմից համարվում էր առաքինութիւն։ Այդ իրը թէ հոգու փրկութիւն որոնողներին, բայց իսկապէս երկինք ու երկիր մրոտողներին մենք այսօր էլ ասում ենք, որ հոգու փրկութեան համար ոչ թէ հարկաւոր է հաւատը փոխել

այլ իրանց գաւաճան բարքը ու փարիսական դիմակը։

2) «Մարդուս արարմունքի վերայ չ՚պիտի իշխանի (չինովնիկի) աչքով նայել, այլ իրաւունքով ու արդարութեամբ ճանաչել լաւն ու վատը. վարձատրել միայն վաստակաւորներին և անվարձ թողնել անվաստակին։ Դատավարութեան միջոցին էլ պէտք է իմաստուն մարդկանց հետ խորհրդակցել, իսկ յիմարներին մեռ էլ չթողնել և միանգամայն դուրս քշել դատարանից։ Եւ երբ որ, ասում է Վահան, այսպէս կ՚լինի, այն ժամանակ աշխարհի գործերն էլ աջող կերթան, ապա թէ ոչ բոլոր աշխարհը տակն ու վրայ կ՚լինի և խառն ի խուռն ընթացք կստանայ, ինչպէս և շարունակվում են մինչև այսօր»։

Ինչպէս երևում է, պարսկական խորհրդարանները ու բարձր պետական հաստատութիւնները լիքն են եղել ձրիակերների Ղավօրիտներով, որոնց աչքումը կաշառքն է «կապարոն օրինաց և մարգարէից»։ Երևի, այն ժամանակն էլ գոյութիւն է ունեցել բառս «Հովանաւորել» — միայն հովանաւորել եղբօրորդի, քուերորդի և ամենատակ որդի անարժանների, իսկ արժանաւորներին յետ քաշել, որովհետև սրանք, գործին ծառայելով, ուրիշների պէս ընդունակ չեն մեծաւորի փէշերը համբուրել!

3) «Մենք յանկանում ենք, որ Արքինեքի աչքը և մեր աշխարհի թագաւորը ամեն բան ինքը իւր աչքով տեսնի և իւր ականջով լսի ու ուրիշների խօսքով վճիռ չտայ, որովհետև ծառայողները սուտ զեկուցումներ անելով թագաւորին, անիրաւ հրամաններ են հանում նրանից և այդպէս զրկում օրէնքի սրբութիւնը։ Այնուհետև ոչ մի հաւատարիմ հպատակ կամ բնակիչ չի կարող իւր կեանքը ու գոյքը ապահով համարել։ ամեն կողմից երկիւղ, ամեն կողմից յափշտակութիւն և աշխարհը քանդուքար! Բայց եթէ թագաւորը ինքը անմիջապէս անօրինէ իւր ծառաների զործերը, այն ժամանակ նրանք, նորից կենդանացած, էլ չեն կշտանալ աշխատելուց, միշտ դէպի բարին զործելով, կ՝փառաւորուեն թագաւորի հետ միասին»։

Մի այսպիսի հեռատես և աշխարհաշէն մարդ էր Վահան, որ մեր օրերին էլ կարող էր վարչական մեծ հանճար համարուել։ որտեղ էլ որ աշխարհաւէն էլ լինէր նա! Վաղարշ թագաւորը, որովհետև շրջանկատ և բարեսէր մարդ էր, Վահանի բոլոր պահանջները կատարից, ինչպէս վերը ասացինք։

Գլ. II.

Այստեղ ես պիտի կանգ առնեմ մի քանի բնորոշ գծերով արտայայտելու Վահանի և առ հասարակ Մամիկոնեան տոհմի նշանակութիւնը, որ այնքան աղնիւ դեր են խաղացել մեր անցած կեանքում։ Չեմ կարծում, որ եթէ խօսքս մի փոքր ընդարձակեմ, ձանձրութիւն կ'պատճառէի ընթերցողներիս։ Իրաւի, որ սրանով պիտի ընդմիջեմ մտքերիս հետևակցութիւնը, բայց փոյթ չէ. զուցէ մեր օտարացած սերունդը, այն տոհմի յիշատակարանը տեսնելով, մի նոր կենդանութիւն զգայ, թէև խոստովանում եմ, որ նրա մէջ այնպիսի ջրացած անհատներ էլ կ'գտնուին, որ եթէ բոլոր զարբաղանները միաժամանակ զրգռացնեն, նրանք եգիպտական սֆինքսի պէս էլն անշարժ կ'մնան։ Պէտք է ասել, որ Մամիկոնեան տոհմի մարդիկը աղգային աղէտների կամ հանդէսների ժամանակ, միշտ անձնուէր և անձնուրաց ծառայ են եղել թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Այս գիծը այդ տոհմի մի առանձին յատկանիշն է, որի շառաւիղները կարծես թէ մրցել են միմեանցից զերազանցելու մարդկային պատուականութեամբ։ Ես մտածում եմ, որ շատերն էլ մեր յետագայ պատմութեան մէջ, սրանց օրի-

նակին հետևելով, այսպէս ասեմ, կռել են հայրենասէրների շղթայաշարը, տեղ-տեղ ազամանդի օղակներով զարդարած ու նշանաւոր խօսքերով քանդակուած, որ Վարդանանց փափկասուն տիկնայքն են կտակել իրանց հեռաւոր քոյրերին այսպէս. «Ազգի սէրը պէտք է սրբո�մը երէլ ՝ ոչ ՝ ՝ ՝

նը բազմապատկելը, այլ իւր ունեցածից առատ ձեռքով էր բաժանում կարօտեալ մարդկանց[1]։ Իւր բազմաթիւ ծառաների հետ էլ այնպէս էր վարվում ու խնամում, որ նրանց մարդկային կոչումը չաբկացնի, ուր բնական ոգին կարող է միայն ազատ աճել ու զարգանալ և ամեն կատարելութիւնների հասնել։ Քանի որ մեր ժամանակներում շատ աղաներ սատրին արարած են համարում իրանց ծառաներին, Մամիկոնեան ծառաները այնքան յարմարութիւն էին վայելում այդ տան մէջ և այնքան ազատ շունչ քաշում, որ Ղազար Փարպեցին «անդատաւոյ» է անուանում Մամիկոնեաններին։ Նա, խօսելով այն նախարարների մասին, որոնք ապրում էին մեծ-մեծ տներով ու փարթամ ճաշկերոյթներով, ասում է, որ նրանց քաղցած ծառաները հանապազ թակում էին անդատաւոյ Մամիկոնեանի դռները, միս և զանազան ուտելիքներ խնդրելով[2]։

Այսպէս մեր օրերին էլ շատ ենք տեսնում այն տեսակ փաշաների ու խաների սովից դիրը-

---

[2]) «Զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զդուրս, խնդրելով հանապազ զմիս այլ և այլ որսոց»։ Ղ. Փ.։

[1]) Տես Ղ. Փ. «...Առաւել ևս կամաւոր յօժարութեամբ յորդորոյն էր աւագ որդին Սրբոյն Հմայեկայ, որում անունն էր Վահան»։

տող ՀԵՄՔԷ, որոնք աղաներին ուղեկցելու ժամանակ մորեխի պէս թափվում են գիւղերի վերայ և ամէն բան սրբում, ինչ որ ձեռք է ընկնում։ պատահում է, որ և ընդդիմադրողների գլուխները միասին! Բայց Վահան մի հազուագիւտ յատկութիւն էլ ունէր, որ մեծ մասամբ պակաս է մեր ժամանակի իշխաններին ու զինուորականներին. նա, բացի իւր ստրատեգիական պլանները կազմելուց և կամ թեթևաշարժ օրսորդի պէս աքարների և կաքաւների երամները զլոբելուց, լաւ կրթուած լինելով Վրաց Աշուշա թագաւորի հոգատարութեամբ և Ղ. Փարպեցու ընկերակցութեամբ, հետաքրքրվում էր և մտաւոր կեանքի հարցերով։

Ինչպէս յայտնի է հին ժամանակներում սովորութիւն կար, որ տգէտ մարդիկ մատենագրերի երկերը արտագրելով, սրանց մէջ զանազան անտեղի աւելուածներ էին մտցնում իրանցից [1]։

[1]) Ահա ինչ է ասում Ղազարը. «Արք տգէտք և յանդգնունք գրեցին յինքեանց ճառս ընդունայնս և անպիտանարանս և խառնեալ եդին ի գիրս գիտուն լսողաց, պլ ընտրող մտաց ճանաչի յայտնապէս գիտնոցն բանք և անմտացն շաղփաղփութիւնք։ Որում արթնամիտ խորհրդականութեամբ ուշադրեալ այսմ ամենայնի, մտաւոր և քաջ պրն Վահան.... Որ բազում և անհամար ուղղութեանց աշխարհիս Հայոց 'ի ժամանակս իշխանութեան իւրոյ եղև արարող ան-

Այս խարդախութիւններին Վահանն էլ տեղեակ էր, այնպէս որ, երբ նա Փարպեցուն առաջարկից նկարագրել Հայաստանում պատահած անցքերը, թէ իրանից առաջ և թէ իւր ժամանակ, նոյնպէս խնդրից առանձին ուշ դարձնել այս հանգամանքի վերայ։

Այսպիսի բարեմասնութիւններով էր օժտուած Վահան, որի հռչակը օրէցօր տարածվում էր ամէն տեղ։ Բայց դրա հետ միասին օրէցօր աւելանում էր և նրա թշնամիների թիւը։ Ցայտնի է, որ այդ թշնամի զրպարտողները մի նախրային յատկութիւն ունին. նրանք շատ շուտ են գտնում միմեանց, շուտ էլ միմեանց հետ ձուլվում, որովհետև միևնոյն հոգու տէր են։ Նրանք ցանկանում են միշտ առաջինը լինել և երբ որ բախտը չի բերում, իրանցից մեծին սկսում են հինգերորդ թուից համարել, որ առաջինը չլինի։ Այսպէս աշխարհիս երեսին չկայ այն մաքուր անձնուրոյութիւնը, որ ժամանակակից ինտրիգան մարդիկ ցեխ չձգեն. բայց ի զուր, որովհետև ցեխը, դեռ աչքած տեղեն

ձամբ և զայլս յորորելով զբազումս։ Սա որպէս և այլ ամենայն բարոյ իրօք հոգացեալ զՀայաստան աշխարհի իրս, առաւել ևս զայս, ի դէպ և պատշաճ համարեցաւ, ի մեացեալ տեղոյ պատմութեան երկրորդ գրոցն՝ ածեցուցանել և յառաջ գրել յայնմ հետէ զնդեալս յաշխարհիս Հայոց»։

չհասած, էլի կպչում է ձգողներին։ Այսպէս էլ Վահան, ընդունած նախարարների բամբասանքին, մնաց այն ամենը տա անգին գոհարը, որ մինչև այսօր էլ չի կորցրել իւր պայծառութիւնը[1])։ Այս առատաձեռն, լայնասիրտ և մեծատուն Մամիկոնեաններին չի վերաբերվում Քրիստոսի խօսքը. «Ո՛ւրեակք, ո՛ւրչափ դժուարին է յուսացելոց յինչս մտանել յարքայութիւն Աստուծոյ»։ «Դիւրին է մտլոյ (ջուան) ընդ ծակ ասղան անցանել քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել»։

---

[1]) Դժբախտաբար, պէտք է խոստովանել, որ երբեմն էլ զղջարտութիւնը լաւ միջոց է զղջարտուածի դէմ մաքառելու, մանաւանդ երբ որ հասարակութեան մէջ պատուի և անձնասիրութեան զգացմունքը քիչ է զարգացած, և այդ պատճառով զղջարտողի նեղշնչումները հալած իւղի տեղ են գնում։ Այն ինչ հասարակաց դատաստանը անհրաժեշտ է այդտեղ։ Ինչպէս պիտ լինի հասարակաց դատաստանը? Հարկաւոր չէ բարբարոսական սովորութեան հետևելը. հարկաւոր չէ ոչ զղջարտողի տունը քանդելը, ոչ էլ հին պեղդագոգի պէս նրա ականջը պոկել կամ մազերը պրծոկել. հերիք է միայն խղճալով մտից անցնել և գլուխ չտալ, այսինքն հրապարակական պատուից զրկել!

Բայց հասարակութեան մէջ կայ մի այդպիսի բարոյական ոյժ?

Գլ. III.

Պատմական իրողութիւնները, որոնց մասին վերը խօսեցինք, կատարուել են հինգերորդ դարում։ Այնուհետև ահա անցել է 1400 տարի և այդ երկար շրջանում Հայերի լաւագոյն մասի մէջ միշտ կենդանի է մնացել ազգային գոյութեան դաղափարը, լեզուի ու գրականութեան ուսումնասիրութիւնը։ Այս զեղեցիկ յատկութիւնների շնորհիւ վերականգնել են Բագրատունեաց և Ռուբինեանց իշխանութիւնները, ապա առաջ են եկել այլևայլ Մելիքութիւններ ու Զէյթունի արիւնահեղ խլրտումները նոյն ազգային բարօրութեան նպատակով, բայց չկարողանալով դիմանալ Մահմեդականների բուռն արշաւանքներին, վերջ ի վերջոյ պիտի տեղի տային նրանց առջև և հրաժարուէին իրանց անկախութիւնից։ Եթէ մի թեթև հայեացք ձգենք մեր այդ երկու թագաւորական հարստութիւնների (династія) վերայ, կ'տեսնենք, որ դրանց մէջ թոյլ է եղել ազգային միութեան գաղափարը։ Նրանք չկարողացան ստեղծել մի բարոյական ու տնտեսական կարգ, մի առողջ պետական օրգանիզմ, որ ընդունակ լինէր ներքին և արտաքին ինքնապաշտպանութեան.

Ա II 34032
40548

չկարողացան, ասում ենք, սանձահարել բաղմաթիւ իշխանների կամայականութիւնը, որոնք իրանց եսական ձգտումներով մեծ վնաս են հասցրել հայրենիքին։ Բայց այստեղ մի հանգամանք էլ պէտք է նկատել, որ շատ կարևոր է մեր յետագայ պատմութեան համար։ Եթէ մի կողմից Մահմեդականները, Ղուրանի ոգւով սնած, անարգել հեղեղի պէս թափվում էին Քրիստոնեայ աշխարհների վերայ, միւս կողմից իրանք քրիստոնեաներն էլ փոխանակ միանալու պատում էին միմեանց, աստուածաբանական վերաբանութեան շնորհիւ որոնց մէջ հայերը, ոչ ցեղակից գտնելով և ոչ դաւանակից, մեացին կղզեացած ու անջատուած,—մի հանգամանք, որ ներկայումս էլ զգալի է։ Մեզ կարող են հակաճառել, որ ցեղակից և դաւանակից ազգերն էլ շատ անգամ ընդհարուել են միմեանց հետ և մեծ կոտորածներ գործել, բայց այդ բանը պիտի վերագրել նրանց ժամանակաւոր թիւրիմացութեան կամ մտաւոր խակութեան, բայց յետոյ, նոյն ազգերը քաղաքականապէս հաստատանալով, էլի եկել են ցեղային համերաշխութեան, թէև կրօնով բաժանուած։ Այսպէս են միացել Գերմանական այլազգաւոր ցեղերը առաջ Պրուս-Ավստրիական և յետոյ Պրուս-Ֆրանսիական պատերազմների օրերով. այսպէս են վերականգնել Յունաստանի ազատութիւնը

և Բալկանեան թերակղզու իշխանութիւնները Ռուսների աջակցութեամբ, որոնք այսօր էլ զբաղուած են նոյն միութեան խնդրով կաթոլիկ Լեհերի և Չեխերի վերաբերմամբ։ Ցայտնի բան է, որ այս տեսակ միջամտութիւնը քաղաքական դիտումներ էլ ունի։

Ցամենայն դէպս մենք սրանով չենք ուզում ասել, որ Հայերը թողնեն իրանց եկեղեցին և փախչեն. այդ մեր կողմից մի աններելի յանցանք կ'լինէր։ Այժմ այդ միութեան ժամանակը արդէն անցել է. այսուհետև այդ միութիւնը ոչ միայն անօգուտ է, այլ և վնասակար, որովհետև քրիստոնէութիւնը զուտ ազգային ուղղութիւն է ստեղծել, հետևաբար և ամեն ազգ, քաղաքականապէս թոյլ և անզօր, որ փրկութեան յուսով մտածում է միանալ մեծի հետ, կ'կորցնի ազգութեան բոլոր նշանները, այսինքն կոչնչանայ։ Այս պատճառով հարկաւոր չէ սուտ քրիստոնեերին հաւատալ, որ իրանց կրօնը բոլորից գերազանց է։ Հայը թող չխաբուի այդ ծերերի առասպելներից և հաւատարիմ մնայ իւր եկեղեցուն և ոչ մի երանութեան հետ էլ չփոխի դրան հէնց այն պատճառով որ այդ եկեղեցին խօսում է հարազատ լեզուով և ուրիշների խոստացած երանութիւնը ինքն էլ կարող է տալ։ Փողից յափշտակուել և կրօնով առևտուր անել, ինչպէս ընդունուած է այժմ, նոյն

է թէ իւր խղճմտանքի մէջ մախաթ խրել և բոլոր կեանքը նրա խայթոցից կրսկծալ!

Բայց թէ հայերը քաղաքականապէս սակաւ ու անօգնական են եղել, ողորմութեամբ Աստուծոյ, նրանց մէջ չի հանդել լուսաւորութեան ճրագը։ Ինչպէս ասացինք, ազգի առաջաւոր մարդիկը, հին դարերից սկսած, անձնուրաց կեանքով աշխատել են հոգևոր կերակուր մատակարարել իրանց հայրենակիցներին և այդպէս նպաստել նրանց յարատևութեան։ Քաղցը է նկատել, որ հարուստներն էլ, թէև փոքրաթիւ, ազգի բարօրութիւնը իրանց գրպանից վերադասելով, առատաձեռն նուէրներ են տուել և իրանց անունը արձանագրել բարեբարաների ցուցակում։ Ներկայումս հայրենագիտութեան և ընդհանուր կրթութեան անհրաժեշտութիւնը աւելի և աւելի է զգալի։ Ներկայումս, երբ ինքնագոյութեան մաքառումը այնքան սուր կերպարանք է ստացել, կեանքի և մահուան խընդիրներում չի խորտակուիլ միայն նա, որ զինուած է գիտութեան հարուստ պաշարով և, ուրեմն, կարող է մրցել ժամանակի հետ։ Այսպէս է մեր ժամանակի աննահանջելի պահանջը։

Այս հոգևոր կեանքի զարգացումը մենք այստեղ առաջ բերինք յիշեցնելու այն պարզերես հայերին, որոնք, անձնատուր լինելով զեղխութեան ու աւելորդ վայելքների, քաշվում

են հասարակաց գործերից։ Դրանցից ոչ ոք չի ուզում մեռնել կրթական գործին, ոչ ոք չի ուզում կարեկցել մեր գրականության ողորմելի գրութեան և ամեն բան կամենում է հրաշքով կատարած տեսնել։ Վաճառականը չի կարդում մեր գրուածը, որովհետև, ասում է, կարդալու ժամանակ չունի. հարուստ մեծատունն էլ չի կարդում, որովհետև ժառանգական սովորութիւն չունի կարդալու և շատ քիչ է զբաղուած ազգի վերածնութեան հարցով։ Քահանան ու վարդապետն էլ, յայտնի է, որ շատ էլ չեն սիրում կարդալ և եթէ այն տարէն մի քանի լոյս տեսած գրքերից հարցնէք, թէ կարդացել է՞ք? — նրանք միշտ միատեսակ պատասխան կ'տան ձեզ. «Այո՛, լաւ է». բայց թէ պատահմամբ էլ կարդան, գրքի մէջ խոր մտքեր լինելով, շատ թեթև են հասկանում, որովհետև շատ թեթև են կարդում! Ինչ ասեմ և մեր ինտելիգենցիային, որ մեծ մասամբ անտարբեր է զէպի մայրենի գրականութիւնը? Մեր ինտելիգենտները միայն իրանց մեղքը ծածկելու համար միշտ բողոքում են, որ այդ գրականութեան մէջ մեծ հանճարներ ու տաղանդներ չեն գտնում։ Կարծես թէ նրանց յայտնի չէ այն հանգամանքը, որ հանճարները սնկի նման չեն բռնում. որ հանճարները դարերով կրթուած ազգի ծնունդ են, ուր կայ թա-

գաւորող կեանքի լայնածաւալ առուներ, հասունացած խնամատարութիւն ու սննդարաններ, բազմատեսակ գիտութիւնների բարգաւաճանք։

Մեր պէս փոքր ազգերին շատ և շատ բաւական են համեստ ու եռանդուն մշակներ, բարեխիղճ գործիչներ, որոնք կարողանային համերաշխ ոյժերով առաջ տանել ընդհանուր լուսաւորութեան գործը։ Ահա այդպիսի գործիչներ մեր մէջ եղել են առաջ, այժմ էլ կան։ Եկէք, հետաքրքրուեցէք ձեր գրականութեամբ և, ես համոզուած եմ, դուք ևս հոգևոր հաճութիւն կ'զգաք։ Բայց չէ. մենք բոլորս դեռ սպասում ենք հայկական Մեսիայի գալստեան, —հայկական հրաշագործ հանճարին! Եթէ մեր այս դատապարտելի անհոգութիւնը շարունակենք, մենք այն յիմար կոյսերի նման արտաքին խաւարումը կ'ճեանք և մի դար էլ չի անցնիլ, երբ ազգամրցուճների միջին կ'ջնջուենք աշխարհիս երեսից։

Ինչ անենք, որ փոքր ազգերը չհալուեն ժամանակիս լայնափոր և լայնաբերան քուրայի մէջ?

Գլ. IV.

Բայց հին ժամանակներում փոքր ազգերին աւելի հեշտ էր դիմանալ օտարի ազդեցութեան

քան թէ ներկայումս։ Հին ժամանակի յաղթողը առհասարակ յաղթուած ազգի կրթութեան ու նիստ ու կացի հետ բան չունէր. նա միայն հաւաքում էր, այսպէս ասել, այդ ազգի անպիտան ՏՐՈՒՆԵՐԸ, այսինքն դրա շահամոլ դաւաճաններին իւր կողմը դրաւելով, և պահանջում էր հաւատարմութիւն և հարկերի վճարում։ Նոր ժամանակը առաջ կտրում է ազգային ծառի բողբոջները դպրոցական և ուրիշ նենգաւոր միջոցներով, յետոյ բոլոր ծառն էլ արմատից գետին տապալում։ Այս պատճառով այսօրուայ յաղթողը բացի նիւթական զոհաբերութիւնից պահանջում է, որ յաղթուածը իւր հոգին էլ տայ և այն բոլորը, որ կազմում է ազգութեան էական գծերը։ Եւ որովհետև այդ էական գծերը ամփոփվում են լեզուի ու գրականութեան մէջ, տիրապետողները իրր թէ վերին պետական շահերի պատճառով ջանք են դնում փակել դրանց աղբիւրները. արգելել ամեն հաստատութիւն ու ձեռնարկութիւն, որոնք նոյն նպատակին են ծառայում։ Այնուհետև սկսվում է մի կատարեալ որսորդական արշաւանք ինչպէս վայրենի թռչունի և վայրենի գազանների դէմ։ Տիրապետողը ասում է. «այս աւելորդ, այն պակասորդ. պէտք է խուզել, պէտք է գզել, պէտք է դզել». — բայց այնպէս է խուզում, որ կաշին էլ հետն է քերթում և այնպէս դզում,

որ բոլոր ոսկորներն էլ միասին ջարդում! Մեզ ասում են, որ այժմեան քաղաքակրթութիւնը, դարևոր փորձերից յետոյ, վերջապէս մշակել է մի խիստ մարդասիրական սկզբունք, այսինքն եղբայրութիւն ազգերի մէջ և հպատակների համար անպայման արդարութիւն օրէնքի առաջև. բայց, դժբախտաբար, այդ արդարութիւնը երկու ներհակ ծայրեր ունի. մի ծայրին ինքն է բաղմած, միւս ծայրին այն, որ հակառակ է իրան: Իսկ ազգերի եղբայրութեան մասին պէտք է ասել, որ «նացիոնալիզմի ատամը» երբէք այնքան սրած չի եղել, ինչպէս այժմ: Նա կարող է թշնամու զանգը մի կողմից ծակել, միւսից անց կացնել! Այդ արիւն-երկաթի հերոսներին թէև մարդկութեան բարեկամները նզովք են կարդում, բայց դեռ իրաւունքը այժի կողմը լինելով, ահա բոլոր աշխարհը գրեթէ պատկերացնում է մի սպառազէն բանակ, ուր ամեն մի պետութիւն կարծես թէ հին Բէլի նման ձգտում է «բանանալ ունել զամենայն երկիր»: Եւ ամեն մի պետութիւն իւր անիրաւ վարմունքը սկզբունքի խնդիր է համարում: Բայց այդ իւարացի է արդեօք? Եւրոպայի վարմունքը Զինաստանի հետ կ'մնայ մի սև բիծ համաշխարհային պատմութեան մէջ, մի վերին ատիճանի անիրաւութեան կոթող, որովհետև այն անպաշտպան աշխարհը ողողուեց իւր հարազատ զաւակ-

ների արիւնով։ Այդ միայն երկունքի սկիզբն է։ Անցողակի ասենք, որ Զինաստանը երկունքի առաջը առնելու համար երկու միջոց ունի. մի որ, նա պիտի ձեռք բերէ իւր թշնամու մտաւոր և նիւթական զէնքը. երկրորդ, նա պէտք է արգելէ քրիստոնէական դաւանութիւնների տարածումը իւր երկրի մէջ, միայն մէկին թոյլ տալով, որովհետև դաւանական մրցումները, որ, անտարակոյս, քանի գնան, այնքան էլ կ'սաստկանան, աւելի վտանգաւոր է նոյն թշնամական արշաւանքներից։

Ի՞նչ ասենք այն խեղճ Բուրերի մասին, որ ամբողջ երկու տարի պատերազմեցին բազմաթիւ անգլիական զօրքի դէմ և վերջ ի վերջոյ պէտք է հրաժարուէին անկախութիւնից և բռնի մահի ենթարկուէին։ Թէպէտ չի կարելի չհամակրել Անգլիացւոց մտքի մեծութեան, նրանց դաստիարակչական ու վարչական սիստեմին ու հասարակաց սարք ու կարգին, բայց այդ համակրանքը չի կարող խեղդել մեր մէջ արդարութեան ձայնը դէպի Բուրերը։ Դժբախտաբար, ոչ մի եւրոպացի պետութիւն իրաւունք չունի դատապարտել այդ կոպիտ ոյժի բռնութիւնը, որովհետև ոչ մէկին էլ չի կարելի ասել. «Անմեղն ի ձէնջ նախ արկցէ քար 'ի վերայ դորա»։ Ամենևին ուրիշ հարց է, որ մի քանի տարի էլ չի անցնիլ, երբ Բուրերը միան-

զամայն կ'ընտելանան տիրապետողին, կ'ստանան քաղաքացիութեան հաւասար իրաւունք և կեանքի ու գոյքի ապահովութիւն։ Աւելին ասենք, որ Բուլգարի պատիւը չէն տրորիլ ցեխի պէս, ինչպէս փոքր Ասիայումն է լինում։ Նրանց կանանց ու աղջկերանց չեն փախցնիլ ցերեկով և չեն էլ պղծիլ նրանց սրբութիւնը,— այն, որ այսօր արդարացնում են զանազան հերոսներ Ախմէտների զարմից! — Եւ իրաւի. եթէ օտար հպատակի լեզուն ու կրօնական համոզմունքը ազատ է բռնակալ միջոցներից, էլ ի՞նչ կասկածանք կարող է լինել դրա հաւատարմութեան մասին, քանի որ այդ հաւատարմութիւնը բերում է իրան նիւթական և հոգևոր հանգստութիւն? Թիւրքիան այդ մասին ամենևին ուրիշ հասկացողութիւն ունի։ Նա խստրող օրէնքներ է գործ դնում Մահմեդականների և Քրիստոնեաների վերաբերմամբ և երկուսի մէջ էլ անսպառ խռովութիւններ ցանելով, երկիրը մնում է անմշակ և բոլոր կարգերը խախտվում։ Թիւրքիան, մոռանալով այն հանգամանքը, որ ամէն աշխարհի մեծութիւնը նրա վաճառքը չէն, այլ տնտեսական և բարոյական պայմանները, ի զուր է հարուածում իւր քրիստոնեայ հպատակներին և այդպէս փակում այն հարստութեան աղբիւրները, որ նրանցից է գալիս։ Միակ ճանապարհը, որ դեռ ևս կարող էր

փրկել Թիւրքիային իւր օրհասական վիճակից, այդ այն ռէֆորմներն են, որ նա 25 տարի առաջ խոստացել է մտցնել քրիստոնեայ հպատակների մէջ, — այն է շինել և բարեկարգել աշխարհը, սանձահարել աւազակաբարոյ ձրիակեր հրոսակներին և առհասարակ հրաւէր կարդալ բոլորին դէպի նոր կեանք, նոր գործունէութեան շրջան։ Քրիստոնեայ ազգարնակութիւնները, գլխով ու գոյքով ապահովուած, կարող են մեծ ծառայութիւն մատուցանել Ցաճիկների տէրութեան. նրանք աւելի հակամիտ և ընտելացած լինելով լուսաւորութեան, ներս կ'բերեն տնտեսական և գործնական գիտութիւններ, ապա և Մահմեդականները հետևելով նրանց, միասին կ'կենդանացնեն աշխարհը։ Այս պիտի լինի Թիւրքիայի առաջին ու վերջին ձեռնարկութիւնը, որ, դժբախտաբար, չեն տեսնում նրա քօռ ղեկավարները, այլ միայն ցամաքում տեսնում են անդրդելի թնդանօթներ,— ծովում — պատերազմական նաւեր երկար ձողերով ու կայմերով! Այո, Թիւրքիայի ղեկավարների վերայ ռէֆորմ բառը այնպէս է ներգործում, ինչպէս կարմիր գոյնը եղան վերայ։ Նրանք չեն ուզում հասկանալ, որ ռէֆորմների յետաձգութիւնը առիթ է տալիս քրիստոնեայ հպատակներին մտածելու իրանց գոյութեան մասին և ուրիշ ճանապարհ որոնելու...

Այս դրութեան մէջ ենք տեսնում այսօր Մակեդոնիան և Փոքր Ասիան, շրջապատած տաճկական զօրախմբերով։ Ցայտնի բան է, որ Մակեդոնիան թէ վաղ և թէ ուշ կ'ստանայ յանկալի ազատութիւն, որովհետև նա դրսից ու ներսից տէր ունի, բայց թէ երկինքը ու երկիրը ի՞նչ է պատրաստում անտէր Ասիային, — այդ ապագայի գաղտնիքն է։ Ախ, եթէ մեր թշնամուն ՏԷՐՈՒԸ տանէր և ապագայ գաղտնիքի լուծումը մեր ազատութեան գարագլուխը լինէր! Մենք այսօր միայն թերայոյս կարող ենք բացականչել.

Հազար ողջոյն այն գարին.
Բարօրութիւն խնդճ ազգիս.
Զէնքով օգնիր թշուառին,
Ատենահաս սուրբ Սարգիս!

Ինչ անենք, որ փոքր ազգերը չհալուեն ժամանակիս լայնաբերան և լայնափոր քուրայի մէջ?

Գլ. Չ.

Մեզ ասում են, որ փոքր ազգերի պաշտպանութեան համար կարող են գործել Մամուլը, քրիստոնէութեան հոգևոր սպասաւորները, մանուկ սերունդը և զանազան ֆիլանտրոպիական և հնախօսական ընկերութիւններ։ Մենք ընդ-

հանուր գծերով տեսնենք, թէ դրանք որքան համապատասխան են իրանց նպատակին։

Մամուլը, որ ընդարձակ մտքով հրապարակախօսութիւն է, մեր ժամանակում, իրաւի, մի ազգային և միջազգային հզօր ֆակտոր է, մի տեսակ էլէքտրական էնէրգիա կամ պաշար, որ լայն ու երկար շառաւիղներ է արձակում երկրի մի ծայրից մինչև միւսը։ Նրա գործողութիւնը անվերջ է, ինչպէս էլ անվերջ են մարդկային կենցաղավարութեան հարցերը։ Ազատամիտ և անկողմնապահ մամուլը, արձագանք լինելով ազգի մէջ տիրապետող շարժումներին, նպատակայարմար ընթացք է տալիս նրանց և լուրջ յօդուածներով նպաստում նոյն ազգի բարոյական և տնտեսական մեծութեան։ Բայց այդտեսակ մամուլը միևնոյն ժամանակ չի ծառայում նեղասիրտ ազգասիրութեան, որ շատ անգամ ժանտախտի միկրօբի պէս վարակում է ընդհանուրի ուղ ու ծուծը և զրկում քաղաքակրթող հանճարից։ Այս պատճառով նա իւր հայրենակիցներին չի քնեցնում մեծութեան քաղցր երազներով, այլ նրանց արատները համարձակ մերկացնելով, ցրվում է հասարակութեան մէջ բուն դրած նախապաշարմունքը, որով և մօտեցնում է ազգերին միմեանց հետ և եղբայրութեան կամուրջ ձգում։ Բայց ազատամիտ մամուլը մի յատկութիւն էլ ունի. նա, դրակա-

նութեան մի մասը լինելով և նրա բաղմաձիւղ տեսակների հետ շփուելով, կազմում է մի նախապատրաստող դպրոց երիտասարդ դրողների համար, սոցա ոճը և մտքերը ուղղելով ու կանոնաւորելով։ Այդ ուղղութեանն են պարտական մեծամեծ տաղանդներ ու հրապարակախօսներ, որոնք նպաստել են մարդկային ընդհանուր առաջադիմութեան և անպաշտպանների պաշտպան հանդիսացել։ Սիրով ողջունենք այդ մամուլը և մեր խորին ու գիտակից շնորհակալութիւնը մատուցանենք! Բայց, դժբախտաբար, մամուլը երկու առանձին հոսանք ունի. մինը, ինչպէս այս բոպէիս ասացինք, լուսաւոր և միտը խաւարային, որը սովորաբար կասկածանքով է վերաբերվում դէպի միւս գործիչները, որ իւր հետ չեն և միշտ էլ դարանամուտ է դէպի օտարները։ Այս պատճառով խաւարասէր մամուլի ներկայացուցիչները, կարծես, միշտ ենթարկուած են հիպնոտիզմի ներշնչումներին։ Նրանք օր ու գիշեր միայն թշնամական արշաւանք են տեսնում այնտեղ, ուր երևակայած թշնամին, իւր մտաւոր և արդիւնաբեր կարողութիւնները զարգացնելով, կազմում է նորանոր գիտական և տնտեսական ընկերութիւններ, ովկիանոսները լցնում բեռնաբարձ նաւերով և այդպիս իւր բարեկեցութեան պայմանները կատարելագործում։— Իսկ նրանք խըմ-

բովին աղաղակում են, որ այդ բոլորը հակառակ է իրանց ինտերեսներին և ոչինչ չեն ձեռնարկում, որ իրանք էլ զուգընթացաբար առաջ գնան։ Խաւարասէր մամուլը այնտեղից էլ թշնամական արշաւանք է տեսնում, ուր խաղաղ ժողովուրդը վաղուց արդէն ղէնքը գուրթանի է փոխել, նիզակը մանգաղ ու գերանդի և քրտինքը երեսին հաւաքում է այն, ինչ որ արտերն ու դաշտերն են բերում։ Նա հէնց այդ ժողովրդի դէմ Դանտէսի դժոխքոցն է զինւորւում, երբ նա մի փոքր նիւթական աջողութիւն ունի, աչքաբաց է և աշխատասէր, բայց գլխաւորը, որ անկախ եկեղեցի էլ ունի։ Սրա համար այդ հոգևորական և աշխարհական հերոսները քար են ձգում այն եկեղեցու վերայ ամեն անկիւնից, ինչպէս գեղդէքը աղայի կրոնատակից ամեն անցորդի վերայ։ Ես համոզուած եմ, որ եթէ այն անկախ եկեղեցին իրանց գոգը ընկնի, մեր հերոսների պլտուխները իսկոյն գոհարանական աղօթքով կ'լցուեն և այնուհետև իրանց քարոզները այսպիսի տողերով կ'սկսեն. «Մենք միշտ համակրել ենք այդ շնորհալի ազգին. միշտ գովասանել ենք նրա ազնիւ յատկութիւնները. կեցցէ մեր նորընծայ եղբայրութիւնը! Բայց որովհետև այդ անկարելի է, անառակ մամուլը աշխարայ պաշտպանում է անտանելի բռնութիւը Փոքր Ասիայում, ուր մի փոքրիկ քիս-

տոնեայ ազգ ենթարկուած է սովի ու հալածանքի։ Անառակ մամուլը մինչև անգամ ծաղրում է այդ ազգի մարտիրոսական զոհերին, մոռանալով, որ երկնքումը Աստուած կայ, որի ողորմութեանն են վերագրում նրանք իրանց բախտաւորութիւնը։ Թող նոքա իմանան, որ այդ բախտաւորների Աստուծոյ ողորմութիւնն է, բայց անբախտների Աստուած էլ կայ, որ նրանց աջողութիւններին այսպիսի հատուցումն է տալիս. «Վա՛յ ձեզ որ յագեալքդ էք այժմ (կշտացած), զի քաղցիցէք. վա՛յ ձեզ որ ծիծաղեալք այժմ, զի սգայցէք և լայցէք»։

«Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախիցուք 'ի դատաստանէ գեհենին»։

Բայց Փոքր Ասիայի բռնութեան վերաբերմամբ Սուլթանի ոսկին էլ մեծ դեր է խաղում մի քանի Եւրոպական հրատարակութիւնների մէջ, որոնք սարկաբար խունկ են ծխում բաշի բուլուկների մեծահոգութեան, որովհետև նրանք հազարաւոր զոհերի գլուխը մի անգամից չեն թռցնում, այլ մի քանի անգամից։ Սարկին ներելի է իւր սարկութիւնը, պատճառ այդպէս է ծնուած. բայց կամաւոր սարկանալ և, «Ոսկի հորթի» պոչը բռնած, արշաւել այնտեղ, ուր փաշան է քշում,—եօթն մահացու մեղքից աւելի է։ Աստուած իմ, ուր, ասես, չլինի այդ «Ոսկի հորթի» ներգործութիւնը. և մարդկութեան

սրբավայրերում, և արդարութեան արիւնալի վերայ և մանաւանդ պօլիտիկայի մէջ-ամեն տեղ անարդ մատալն է թագաւորում։ Այս է մեր մարդկային և քրիստոնէական առաքինութիւնը, որ Մեֆիստոֆելը սատանայի հետ միասին ծաղրում է դառնութեամբ.—

«Երկրի վերայ ադգ մարդկային
«Միայն մի սուրբ կուռք է պաշտում։
«Որ տիրում է ողջ աշխարհին,—
«Եւ այդ կուռքն է ոսկի հորթ»! [1])

Այս զուխտ էլ վերջանում է պեսեմեստի հայեացքով։ Չօ չի կարելի հրամայել մեր աչքերին որ չտեսնեն այն, ինչ որ գրած է իրանց առջև! Պէտք է օրը, ջուրը և հողը իրանց յատկութիւնը փոխեն. պէտք է մարդը վերաստեղծուի, նորից կաղմակերպուի Ֆիզեկապէս և հոգեպէս,—և այն ժամանակ միայն հնարաւոր կլինի անզօրին փրկութիւն գտնել զօրաւորի կողքին, ինչպէս գառին գայլի կողքին! Ա՜հ, որքան քաղցր էր ինձ շարադրութեանս սկզբին հեռանալ սրատմաշ իրականութիւնից

---

[1]) На землѣ весь родъ людской,
Чтитъ одинъ кумиръ священный,
Онъ царитъ надъ всей вселенной,
Тотъ кумиръ телецъ златой.

(Опера «Фауста»).

դէպի առասպելախառն կեանքի աշխարհը, այնտեղ նրա բանաստեղծական կամ վիպական յարմարանքի մէջ հանգստանալ և մեր ժամանակի ստախօս բերաններից ազատուել!

Գլ. XI.

Կրօնի սպասաւորը կարող էր հաստատ նեցուկ լինել ճարակտուր թշուառներին, եթէ հաւատարիմ մնար քրիստոնէութեան հիմնադրի պատուէրներին: Բայց դարերի ընթացքում աւանդած ուսումը այլակերպուելով, այնպիսի վիհ է բացվում Ուսուցչի և աշակերտի մէջ, որ անկարելի է դրան ծածկել և վերականգնել առաջին միութիւնը: Թէև դժուար է համաձայնել այն կարծիքի հետ, որ ինչ էլ կայ քրիստոնէութեան մէջ, հակառակ է քրիստոնէութեան, բայց պիտի խոստովանել, որ մեծ մասամբ ճշմարիտ է: Կրօնի սպասաւորը անմիջապէս նուիրուած չլինելով նոյն կրօնի սրբութեան, ինչպէս Ինքը Քրիստոսն է աւանդել, ենթարկվում է կողմնակի ազդեցութեան և այդպէս էլ գործում: Զորօրինակ՝ նրան պատուիրած է խեղճի բեռը թեթևացնել, հարստահարուածին պաշտպանել իւր հարստահարողից, խարութիւն չանել հարստի և աղքատի մէջ,—այն աղքատի կամ աղքատների, որոնք

գլխաւորաբար պատճառ եղան քրիստոնէութեան տարածման։ Բայց այդպիսի դէպքերում ինչպէս է վերաբերվում կրօնի սպասաւորը? Ես այստեղ կամենում եմ մի փոքրիկ քարոզ ասել իմ ընթերցողներին և սիրողաբար կը-խնդրէի ուշադրութեամբ լսել։ Ես, անտարակոյս, կ'խօսեմ միայն կարելին և ոչ թէ անկարելին, որովհետև եթէ բոլոր եղծուածների կը-ծիկը ետ տայի և ձիգ քաշէի, կասկած չկայ, որ ճանապարհի մէջտեղը թելը մկրատով կ'կտրուէր!

Քրիստոսի երկրաւոր կեանքը ներկայացնում է մեզ, ինչպէս ամենիս յայտնի է, մի այնպիսի գործողութեան հանդէս, ուր մենք տեսնում ենք հարստահարողներից հալածուած ու գլուխը պատին խփած թշուառներ, որոնց Նա կարեկցաբար ձեռն է մեկնում կանգնեցնելու։ Այս պատճառով Քրիստոսի բարեկամները ու սեղանակիցները կաղ, կոյր ու յուսահատութեան կողքին կանգնած աղքատներն են. և գլխաւորը՝ Ինքն էլ դրանց հետ միասին աղքատացած, ոչ հայ է գտնում, ոչ ջուր, ոչ տուն. «Աղուեսուց որջք գոն,—ասում է Նա,—և թռչնոց երկնից դադարք (հանգստանալու տեղ) և Որդւոյ մարդոյ ոչ գոյ, ուր դիցէ զգլուխ»։ Ով էին Քրիստոսի հակառակորդները, որոնք թոյլ չէին տալիս Նրան գլուխը մի տեղ դնել և հանգստա-

նալ ? Դրանք գլխաւորապար Փարիսեցիներն էին ու դպիրները և զանազան կուշտ մարդիկ, որոնց համար մահ է ամեն մի նոր շարժում կամ ոգեփոխում, որովհետև այդ շարժումներով պէտք է յեղաշրջուէր նրանց կեանքը, որ ներկայացնում էր մի ճահիճ կանգնած ջրերով, բարբոսած ու մամռապատ։ Փարիսեցիները ու դպիրները, ամեն բարիք ձրի ստանալով կեանքից, փափուկ ուտում էին, փափուկ խմում, փափուկ քնում. յայտնի բան է, որ նրանք պիտի հակառակէին Քրիստոսի վերանորոգիչ վարդապետութեան և աղքատների բերանը խփէին, երբ նրանք աղաղակում էին. «Ովսաննա, որ դաս յանուն Տեառն»։ Բայց այդ անգործութիւնից գերացած թշնամիները միայն մի բան չէին նկատում, որ իրանց ամեն մէկի դէմ կանգնած էին մի-մի միլիոն աղքատ, որ այդ աղքատների մէջ տարերական զօրութիւն, հաւատ ու յոյս կայ և հարկաւոր դէպքում կարող են տարեր տեղից ժաժ տալ։ Եւ ահա զարմանալի չէ. հէնց այն բոբիկ աղքատներն էին, որ յետոյ հեղեղի պէս խորտակեցին հարուստների ու բռնակալների պարիսպները և, անտանելի կեղեքանքների ենթարկուելով, վերջապէս ստիպեցին նրանց, բերին ու դրին Աւետարանի ոտքի տակ։ Այս անշահասէր սիրոյ մրցանակն էր. բայց մեր դարը շահասէր և հաշուեառեա է, կրօնի սպասաւորն էլ դարի հետ է

գնում և ոչ թէ դարի դէմ: Նա ևս մեծ կշիռ է տալիս գրպանին և ամեն բան գրպանով չափում: Այս այսպէս լինելով, առաջուայ «քրիստոնէական ստեղծագործող արուեստը», այժմ փոխուել է «շահագործող արհեստ», հետևաբար կրօնի սպասաւորն էլ այսօր մեծաւորի դեռն է, որովհետև նրանից օգուտ ունի, թէև այդ արդելուած է Քրիստոսից. «Ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի»: Ցայտնի բան է, որ այստեղ մեր խօսքը գլխաւորապէս վերաբերվում է միսիոնարներին ինչպէս քրիստոնէութեան, այսպէս ասենք, գործնական առաքեալներին, որոնք, աշխարհիս ծայրերը պտըտելով, լաւ պիտի ճանաչէին հարստահարողին ու հարստահարուածին, սրա դառն տանջանքները ամոքելով և հոգևոր մխիթարութիւն մատուցանելով: Այս բաւական չէ, նրանք պիտի աւանդէին բուն քրիստոնէութեան ոգին և ոչ թէ մոլորցնէին նրան կրօնական բարդուածներով և անպտուղ ծէսերով:

Այս է պատճառը, որ երբ թխպած երկինքը հրեղէն կարկուտ է թափում խեղճերի գլխին, միսիոնարները փոխանակ օգնելու, իսկոյն գլորվում են փիլիսոփայական աստուածաբանական էրոյքի մէջ և բացականչում. Հա՛, հա՛. այդ Աստուծոյ պատիժն է, որովհետև մեզ չեն պատկանում: Սրանք ոգով աղ-ապոնէրն են, բայց

ոչ այն աղքատներից, որոնց Քրիստոս խոստացել է յաւիտենական կեանք! Այնպէս որ չենք սխալուիլ, եթէ ասենք, որ կրօնի սպասաւորի պարտականութիւնը մեծ մասամբ լոկ ծիսապաշտութիւն է: Այս վերաբերվում է մանաւանդ և հեթանոսների մէջ քարոզութեան. նրանք պէս-պէս հրապոյրներով աստուածներին, երեք անգամ ընկղմում են աւազանում և կամ գլխից ջուր սրսկում մարմնի վերայ և դրանով վերջացնում քրիստոնէութեան կարգը: Նաա անգամ այդ կարգն էլ կատարվում է ոչ թէ մկրտուողի յօժարութեամբ, այլ բռնի միջոցներով կամ ժանդարմների ու դիպլոմատների սպառնողական միջամտութեամբ, քանի որ ինքը Քրիստոս արգելում է այդտեսակ գործելու եղանակը, ասելով. «Եւ որք ոչ ընկալցին զձեզ և ոչ լուիցեն ձեզ, յայնժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց 'ի վկայութիւն նոցա»: Եւ կամ «Երթայք. ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ի մէջ գայլոց»: — Զգիտենք խաղաղասէր Զինմաչինը այսօր ինչ կարծիք ունի այդ գառների մասին?

Առհասարակ պէտք է նկատել, որ կղերականները, կրօնական ճշմարտութիւնները իրար տալով, չեն ուզում տեսնել, որ հէնց առաջին խրատատը իրանք են պատճառում նոյն կրօնի

շինուածին, որի երկրորդ և երրորդ և չորրորդ աղիւսը էլի իրանք են շարել! Ցայտնի բան է, որ անձնուրաց հոգևորականներ, քաջ և առաքինի հովիւներ ու քարոզիչներ թէ քահանայի սաղաւարտով, թէ եպիսկոպոսի թագով և թէ կարդինալի ծիրանի զգեստով եղել են և կան ամեն դաւանութեան մէջ, բայց ինչ են դրանք այն «Էն-ը՝ Էն-ը՝ Ն հաղարը՝ հաղարոց» բազմութեան առաջև, որոնք իրանց ծիսական եղծումներով ալեկոծում են սրարած աշխարհը [1]։

[1]) Մի այդպիսի ծիսական եղծումի շնորհիւ ծանր տպաւորութիւն պատճառեց մեզ այն իրարանցումը, որ հէրու առաջ եկաւ մեր մի քանի հոգևորականների կողմից հ. Ղևոնդ Ալիշանի հոգեհանգստի առիթով։ Ինչքան մեզ յայտնի է, հայաստանեայց Եկեղեցին համեմատաբար ներողամիտ է եղել դէպի օտարադաւանները, բացի մի քանի բացառիկ դէպքերից, որ տեղի են ունեցել անցեալում և որը պիտի վերագրել ժամանակների տգիտութեան և կամ ֆանատիկոսական պայթումների։ Հոգեհանգիստ չկատարել օտար քրիստոնէի վերայ, նշանակում է հեռանալ Աւետարանի վարդապետութիւնից և երկպառակութիւն ցանել այլևայլ կրօնական համայքների մէջ։ Ներկայ դիպուածում այդ խորութիւնը աւելի է ծանրանում մեր սրտի վերայ հայր Ալիշանի վերաբերմամբ, որ ամենալաւ հայերից մինն է եղել և որ, իւր ամբողջ կեանքը նուիրելով հայրենասիրութեան, ազգային յիշատակարանների մէջ նախանձելի տեղ է գրաւել։ Եթէ հայոց Եկեղեցին հրապարակաւ աղօթք

Այսպէս ահա մենք, որչափ ներում էր մեղ տեղը ու չափը, հարևանցի պարզեցինք այն ուղղութիւնը, որ կրօնի սպասաւորի մէջ խոր արմատ է արձակել մասամբ ժամանակի ներգործութեան պատճառով և մասամբ, որ էական ու գլխաւորն է, մեր ծամածուռ դպրոցական սիստեմի շնորհիւ, ուր ամեն կրօնուսոյց աշխատում է ոչ թէ ընդհանուր մարդասիրական ու քրիստոնէական սկզբունք հաղորդել իւր աշակերտին, այլ տեղական աւանդական մեացորդներ, որով և խախտվում է կրօնի մեծութիւնը ու եղբայրական միութիւնը: Այդպիսի հանդամանքում խիստ տարակուսելի է,

---

է անում բոլոր քրիստոնեայ ազգերի համար, դրա սպասաւորը ինչ իրաւունք ունի հակառակը գործել? Մի՞թէ այդ պատիւ ու պարծանք է լերում մեր Եկեղեցուն? Ոչ թէ հարկաւոր է միայն հոգեհանգիստ կատարել օտարի վերայ, այլև, եթէ հանդամանքն է պահանջում, հաղորդել և թաղել, միայն առանց բռնաբարելու դրա խղճի ազատութիւնը, որ մի տգեղ բարբարոսական սովորութիւն է. Եւ ամեն անգամ այդպիսի դէպքերում պէտք է բաց թողնել այն բոլորը, որ մարդկային ձեռքի գործ է և միայն հետևել տնօրինող սիրոյ պատուէրներին, որ աւանդել է մեզ քրիստոնէութեան Աստուածեղէն հիմնադիրը.—Աւելորդ է այստեղ մատնացոյց լինել ուրիշների վերայ, որովհետև ուրիշների արարմունք էլ հակաքրիստոնէական է, ինչպէս և մերը.

որ հողևորականը հարստահարուած ազգերին փրկարար հանդիսանայ։

Ինչ անենք, որ փոքր ազգերը չհալուեն ժամանակիս լայնափոր ու լայնաբերան քուրայի մէջ?

Գլ. XII.

Մենք կարծում, որ մեր ընթերցողների մէջ դանուի մի մարդ, որ կարողանար սկսել մեր դէմ զրաւոր կամ բանաւոր մենամարտութիւն և պաշտպանել վերը նկարած մոլեռանդներին, որոնք քաղցած օտարադաւան երեխաներին հացի տեղ քար են առաջարկում։ Եթէ այդպիսի մարդիկ դտնուեն, թող իմանան, որ մենք միշտ հեռացել ենք կրօնական հարցերից, եթէ դրանք հակառակ չեն եղել մարդկային բարոյականութեան և ազգային տեսակէտից, — հայ ազգի ընդհանուր շահերին, որ բոլորիս համար նուիրական ու կենսական խնդիր պիտի լինի։ Մենք միշտ ասել ենք, որ դաւանական խտրութիւնը պիտի վերջանայ այնտեղ, ուր սկսվում է հասարակաց միութեան դաղափարը։ Ասացէք, մենք ի՞նչպէս լռենք, երբ այլադաւան միսիոնարները հաւաքում են հայ երեխաներին իբր թէ դաստիարակելու նպատակով, բայց իսկապէս օտարայնելու ոչ միայն իրանց եկե-

դեցուց, այլ և մայրենի լեզուից, որ նշանակում է մանչաթոյն սրսկել նրանց երակների մէջ։ Երբ որ մենք բողոքում ենք այդ ամենաչար միջոցների դէմ, մեր պլատաւան հայրենակիցները, փոխանակ մեզ պաշտպանելու, կրօնական եռանդով խմորուած, մեր դէմ են բողոքում, մառանալով այն տարբերական ճշմարտութիւնը, որ այդպիսի դէպքում, գերակշիռը ազգութեան կողմն է և ոչ թէ կրօնի, այսինքն բոլոր հայերը առաջ պէտք է պաշտեն իրանց հայութիւնը և յետոյ զաւանութիւնը։ Այս պատճառով եթէ այդ զաւանութիւնը իմ ազգութիւնը կաշառէր ու հեռացնէր իմ լեզուից, ապա ես պատրաստ էի հրաժարուել նրա բոլոր խոստացած երանութիւններից! Այս տեսակ մտքեր ծագեցին մեր մէջ յետագայ հանդամանքից։

Սրանից երկու տարի առաջ լոյս տեսաւ մեր աշխատութիւնը «Ցիշողութիւններ Վարդանանց տօնի առիթով», որ ուրիշ նիւթերի հետ պարունակում է և հետևեալը.

ա) Հ. Շարմատանի անասնուած վերաբերմունքը դէպի սովատանջ հայ երեխաները.

բ) Հռովմայ Պապերի ձգտումները հայերին հայութիւնից հեռացնելու, մանաւանդ Ռուբինեանց շրջանում.

գ) Ակնարկ ինկուիզիցիայի կամ հաւատաքննութեան մասին.

դ) Քրիստոնեայ ազգերի յարուցած հալածանքը կառապաշանների և միմեանց դէմ, որ այսօր էլ շարունակվում է։

Այս բոլորը «Հանդէս Ամսօրեայ» հրատարակութեան թղթակիցը (Հ. Գ. Գար ստորագով. 1971 թ. 8 Օգոստ.) մի ժահրոտ և ժանգոտ տրամաբանութեամբ ընդունեց, ասելով մինչև գլուխը զինուորուելով մեր դէմ։ Նա իւր խարդախած ապացոյցների հիման վերայ հաստատում է, որ մենք «ուղիղը դիտմամբ կ'ծամածռենք» կամ «խորին տգիտութեամբ կ'թարթափենք», իսկ «Ընդհանուր Պատմութիւնը» մեզ համար ստուգիւ terra incognita մնն է» և այլն։

Նատ կարելի է, պատուելի հայր, որ այդ բոլորը այդպէս լինի. հակառակել Ձեզ բոլոր կէտերով ասել է իզուր մաղի մէջ ջուր ածել։ Բայց և այնպէս մենք մեր տգիտութեամբ էլի մի բան ուսել ենք նոյն Ընդհանուր Պատմութիւնից, որ ինկուիզիցիան իւր բոլոր շարմեատաններով ու պաշտպանողներով միասին մարդկութեան միշտ հրէշներ են ընծայել, որոնց ձեռները կապել պիտի և ոչ արձակել։ Մենք մտածում ենք, որ ժամանակով վերջին կռօն կ'ընտելանայ քաղաքակրթող լոյսին, միայն չեն կարող ընտելանալ Ձեզ պէս ատուածաբանները, որոնց ատուածաբանութիւնը, անկեղծօրէն ասենք, բացատուած է նոյն ատուածու-

թեան, որովհետև իրանց կրօնական յանցանքները միշտ աստուածային յատկութիւններին են վերագրում։ Միայն մի օրինակ բերեմ Զեղ համոզելու համար, եթէ միայն ընդունակ էք համոզուելու։ Աստուածային յատկութիւնը ասում է. «Թոյլ տո՛ւ հանկո՛ւյդ գալ ա՛ռ ի՛ն Ի՛ն ապրելը՝ զրոսա, զի այդպէ՛սոց է արքայութիւն Աստո՛ծոյ։... Եւ՝ ա՛ռէալ զնոսա 'ի գիրկս յիւրս եդ 'ի վերայ Ի՛ օրհնէաց»։ Իսկ Յիսուսի սպասաւորը, աստուածարան Շարմեան, սովամահ հայ երեխաների մասին ասում է, որ այդ Աստուծոյ պատուհասն է յատուկ այն պատճառով, որ դրանք չեն ընդունել կաթոլիկութիւն! Ինչ էք կարծում, «Հանդէսի» աշխատակիցը ոչ թէ զզվում է այս խօսքերից, այլ ընդհակառակն, նա, դաւանացաւից դըրդուած, դեռ քաջալերում է այդ որսորդ հերոսներին, ասելով. «Հաւատոց քարոզչաց որսորդ ըլլալուն մենք չենք զարմանար, վասն զի այն իսկ է իրենց կոչումը «զի 'ի ծովէ աշխարհի որսայցին զբանականսս ի կեանս» [1]) Բայց մեր

[1]) Նա, իրաւի, այս խօսքերը ուղղակի չի վերաբերում Հ. Շարմեաններին, այլ առհասարակ քրիստոնէութեան քարոզիչների դերին. բայց այդ բոլորը մէկ է. դրանց մէջ բազմերանգ Շարմեաններ էլ կան, որոնց արարմունքի մասին ծպիտ էլ չի հանում!

խօսքը հօ գրուածների մասին չէ, այլ գրանց գործադրութեան մասին է։ — Գրուած է. «Մէ ՝՝՝՝ վկայութիւններ էք տալիս մեր «Ցիշողութիւնների» վերաբերմամբ և, որ աւելի դատապարտելի է, եղուիտական միջոցների էք դիմում, ասելով. «Առաջիկայ գիրքս գիտական տեսակետէ առեալ ամենևին յարդ չունենալէ զատ, կրնայ շատ դիւրաւ միամիտ ընթերցողայ Ոչ՝՝՝ ՝՝՝ Ոլաբ գաղափարներով պղտորել»։

Կասկած չկայ, որ «Հանդէսի» աշխատակիցը այժմ էլ այս մեր «Մի քանի խօսք իմ ընթերցողներին» կարդալով, կուզարկէ մեզ իւր երկրորդ անաթէման։ Փոյթ չէ. մենք արդէն փոխարէնը առաջուց յեռ տուինք նրան բարդուած տոկոսներով, ինչպէս պարտապանը իւր պարտատիրոջ։

Ինչ անենք, որ փոքր աղդերը չհալուեն ժամանակիս լայնափոր ու լայնաբերան քուրայի մէջ!

Գլ. XXII.

Մեզ մատնացոյց են անում վերածող սերընդի վերայ, որը, ասում են, կենդանի կեանքի արձագանք լինելով, գիտէ յարմարուել նրա

մշտափոփոխ պայմանների հետ. գիտէ հեռանալ դիտական նորանոր դիւտերին և ոչ թէ հին ուսուցչի պէս քարանալ մեռած դասագրքերի շեղջի մէջ։ Նա այս և այն վերացական կամ փիլիսոփայական սկզբունքը չի տանում դէպի անհասանելի երկինք, այլ աշխատում է երկրային հիւթերով էլ կենդանացնել ու ընդհանրացնել դրանց, որ պիտանի լինի բոլորիս համար։ Այսպէս, ասում են, նոր սերունդը, հին սերունդի նախապաշարմունքներից ազատ լինելով, գեղեցկածաւալ գետի նման մտնում է ամէն տեղ և, առաջուայ թումբերը աւերելով, մի նոր հիմք է ձգում դալոց քաղաքակրթութեան։ Այդ հայեացքը միանգամայն ուղիղ է, եթէ նոր սերունդը չենթարկուէր ընտանեկան, հասարակական և դպրոցական արկածներին. եթէ միայն, ասում ենք, նրա ֆիզիկական ու բարոյական կարողութիւնները ստանային համապատասխան սնունդ ու զարգացում։ Ցայտնի է, որ մեր դպրոցները չեն աւանդում աշակերտին այն, որ զարգացնէր նրա մէջ և գեղարուեստական ճաշակ և աշխատաւորի յատկութիւն կենաքի բոլոր խաւերի համար։ Մեր դպրոցը, հետևելով արիստոկրատական կամ արիստոտէլեան դասընթացի եղանակին, այսպէս ասել, բոլոր աշակերտների մէջ կամենում է սեսնել տաղանդի կոչում, գեղարուեստի շնորհ, պերճախօսութեան

թուիչք, մոռանալով, որ դրանց կարող են ընդունակ լինել մի քանի ընտրեալներ և անընդունակ ահագին մեծամասնութիւնը։ Եթէ Արիստոտէլը օրինաւորել է ուսուցանելու այն, որ զարգարում է մեր կեանքը, որպիսի են իմաստասիրական — գեղարուեստական առարկաները առհասարակ, այդ մասամբ հասկանալի է, որովհետև հին աշխարհը յանձինս Յոյների ներկայացնում էր «արուեստանոց», իսկ նոր աշխարհը դրա կողքին դնում է և իւր «արհեստանոցը»։ Հին աշխարհը հրաշքների աշխարհ էր, որ ամեն բան վերագրելով աստուածների ներգործութեան, աշխատում էր կալանաւորել հոգածին մարդու միւս կարողութիւնները։ Նոր աշխարհը, միայն աստուածայինը երկնքին տալով, բոլորն էլ կապում է երկրի հետ և ջանք դնում ազատ ընթացք տալ պէսպէս մարդկային ընդունակութիւններին։ Այսպէս է առաջ դնում կեանքը, բայց դպրոցը դեռ չի ուզում իւր աւանդական դիրքից հրաժարուել, իսկ ուսանողները, կենդանի սնունդ չգտնելով, սկսում են ցամաքել և կեանքի թումբերի մէջ էտած արգատի պէս կիտուել։ Բացի սրանից նրանք այդտեղ պատահում են այնպիսի սոցիալական խարութիւնների, որոնք համապատասխան չեն դպրոցական բարոյախօսութեան, որ խոստացել էր այն ուսանողներին անձնական արժանաւորու-

թեան վարձատրութիւն առանց դանդաղանելու ազգ, կրօն, դասակարգերի արտօնութիւններ։ Այդ պրակտիկական անօրմալ պայմանների շնորհիւ երիտասարդութիւնը ընկնում է ծայրայեղութիւնների մէջ, որոնցով նա մտածում է նոր դարպլուխ կազմել մարդկութեան։ Այդ ծայրայեղութիւններից մինն էլ կոմունիզմն է, որ մասին մտադիր եմ մի փոքր խօսել։

Նախ և առաջ մի քանի խօսք իմ երիտասարդ լսողներին։ Այստեղ ես ինչպէս մի փոքր բան ուսած, մի փոքր էլ վարժուած մարդ, ներում եմ ինձ սիրողաբար ուղեկցել ձեզ։ Ես գիտեմ, որ մենք չենք սիրում բառս «խորհուրդ» կամ «առաջարկութիւն». մենք դրողներս առհասարակ սիրում ենք առանձնացած ապրել և առանձնացած գրել։ Գրական մտերմութիւն կամ համերաշխութիւն մեր մէջ չի երևում. երևածն էլ շատ անգամ միայն վարագոյր է և դիմակ։ Այդ դրութիւնը աւելի վատ կերպարանք է ստանում, երբ շատերս էլ առանց սովորելու իսկոյն սկսում ենք սովորցնել հոչակի ծառաւից, չկարծելով, որ սովորելը նոյնչափ ևս դժուար է, որչափ և սովորցնելը. ուրեմն եթէ ասեն առաջին յարկը խախուտ է, ինչ պիտի լինին երկրորդը և երրորդը? Այս պատճառով մենք շատ ինքնահաւան ենք, որ կարողանանք բարեկամական խորհուրդներից օգուտ քաղել։ Բայց այդ-

պիսի վերաբերմունքը ներելի է այն մարդկանց, որոնք, աշխարհային մեծութիւններով յղփացած, իրանց կեանքում մի հատ կուռք են պաշտում և այդ մի հատ հաւանած կուռքը իրանք են! Մանաւոր կեանքում, դրականութեան մէջ, միանգամայն ինքնահաւան լինել դժվելի բան չէ։ Ահա թէ ինչու խոնարհարար կ'խնդրէի, որ եթէ ասածներս չընդունէք, գոնէ ինձանից չդժուարանաք։

Ցայտնի բան է, որ երիտասարդութիւնը չի կարելի չսիրել, և մենք նրա առաջին սիրահարն ենք. բայց ճշմարտութիւնն էլ չի կարելի չսիրել, այսինքն որ երիտասարդութեան մի մասը մեր մէջ ևս տարօրինակ դիրք է բռնել այսօր, որ չի տանում դէպի առաջադիմութիւն։ Նա, անկայուն ու անհաստատ ատոդի պէս թափառելով տիեզերքի շուրջը, ասում է, որ ազգայնութիւն քարոզելը վնաս է բերում մարդկութեան բարոյական մեծութեան և ատելութիւն շարժում ազգերի մէջ. պէտք է կոսմոպոլիտ լինել սոցիալական չարիքների առաջը առնելու համար։

Ազնիւ պարոններ, իհարկէ, որ ոչ ոք չի կարող նախատեսել, թէ մարդկութիւնը ապագայում ինչ կէտի վերայ կ'կանգնի, բայց ես էլ համոզված եմ, որ ազգայնութիւնը, մի տեսակ ինքնախնկարկութիւն հասկացուելով, շատ ան-

գամ ազգերը իրար է տալիս և արիւն երկաթով միմեանց ջնջում։ Բայց սրա մեղքը հո ազգայնութիւնը չէ, այլ այն ատելութեան սերմը, որ ցանում են մեր սրտում ընտանիքը, դպրոցը ու հասարակութիւնը։ Դուք կարծում էք, որ եթէ պակ դաք ձեր արմատից, ատելութիւնը կ'վերջանայ?

—Դոնէ այդպէս են կարծում եւրոպացի առաջաւոր մարդիկ, որ այն ժամանակ նեղահայեաց վերաբերմունք չի լինիլ ազգերի մէջ։

—Ես ինձ թոյլ եմ տալիս կարծել, որ դուք այդտեղ էլ սխալվում էք. երևի, կամենում էք ասել, որ այն կրթուած մարդիկը, ուսումնասիրելով բոլոր գիտութիւնների հանդէսը, ազգերի անցածն ու ներկան, ամենից յետոյ դալիս են այն եզրակացութեան, որ ազգային անձնապաշտութիւնը կամ երևակայած մեծութիւնը տգիտութեան նշան է ու հետևանք մեր անկանոն կրթութեան։ Ուրեմն դպրոցից պէտք է դուրս քշել մեր մտածողութեան աքօլաստիկական եղանակը, ուր ամէն ազգ, իւրը կատարեալ համարելով, բոլորն էլ միասին մնում են անկատար։ Պէտք է բնական երևոյթների պատճառները խմաստասիրել, առողջ գիտութեան ենթարկել կեանքի ցանցապատ մանրանկարը և ժողովուրդը խլել պեղանտ ուսուցիչների և

մանաւանդ ամէն տեսակ կախարդների ձեռքից, որոնք յիմար և անմիտ զուշակութիւններով գիտեն միայն մոլորեցնել նրան։ Այն ժամանակ բոլորն էլ թէ քիչ թէ շատ կրքոտած լինելով, կ'կարողանան փոխադարձաբար յարգել միմեանց, որովհետև անկիրթը գիտակցաբար չգիտէ յարգել ոչ իրան և ոչ ուրիշին, բացի բախտաւոր ծնուածներից, որոնք իրենէ սիրելի բարք ունին ու անձնայարգութեան զգացմունք։ Բայց պէտք է խոստովանել, որ ինչքան էլ ազգերը կրթուին ու դաստիարակուին, այնու ամենայնիւ անկարելի է ազգային ինքնասիրութիւնից հրաժարուիլ։ Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր կ'լինէր մարդկային կազմուածը կիրքերի պրոցէսից ազատել, որ մի անհնարին բան է։ Քանի որ երկիրը գոյութիւն ունի, հողեղէն մարդու կիրքերն էլ գոյութիւն կունենան. բայց օգուտ էլ չէր լինիլ եթէ աջողուէր անդամ մեր կիրքերը ջնջել, որովհետև այն ժամանակ մարդկութիւնը կ'դառնար մի խաղաց ներքինի, անընդունակ հոգեկան թռուիչքների ու քաջագործութեան։ Ցամենայն դէպս ազգային գիտակից ու լուսաւոր ինքնասիրութիւնը չէր կարող այնքան էլ մեծ արիքներ բերել մարդկութեան դլխին և կ'մեղմացնէր միջազգային յարաբերութիւնները։

Ազնիւ երիտասարդներ, ես մտածում եմ, որ

այդ կոսմոպոլիտիզմը կատարեալ եղջերուա-
քաղութիւն է։ Վերջապէս այն առաջնեթաց
մարդկանցից ոչ ոք չի պնդում, որ ազգերի մէջ
ընդհանուր համերաշխութիւն քարոզելը նը-
շանակէր ազգային զաղափարից հրաժարուել
և, այսպէս ասել, չքանալ ընդհանուրի մէջ։
Ուրեմն ի՞նչ հարկաւորութիւն կայ, ձեր ազգի
ցաւերը մոռացած, այդ հեռաւոր խնդիրներով
զբաղուել և քաղաքակրթուած ազգերից առաջ
ընկնել, քանի որ նրանք էլ մեծ ու փոքրով
հոգս են տանում նոյն ազգային պիտոյքների
համար։ Բայց այս յայտնի լինի ձեզ. քանի որ
դուք կ՚թարթափուէք կոսմոպոլիտիզմի երանու-
թեամբ, ձեր երանելի ազգը արդէն հայր Աբրա-
համու զոգումը կ՚լինի! Թոյլ տուէք ինձ, մի
հարց էլ ձեզ առաջարկեմ. կոսմոպոլիտիզմը
հակառակ է ազգային լեզուին ու գրականու-
թեան?

—Թէպէտ շատերը այդպէս են մտածում,
բայց մենք ոչ։

—Ուրեմն ուսումնասիրել էք ձեր լեզուն ու
գրականութիւնը?

—Դեռ ոչ, որովհետև հայրենագիտութեան ա-
ռարկան մեզ համար մի անծանօթ աշխարհ է,
մենք ոչ ընտանիքի մէջ ենք լսել դրա մասին
և ոչ էլ դպրոցներում, ուր հայերէնը մի ար-
գելուած ապրանք է համարվում։ Անկասկած,

եթէ մայրենի լեզուի սէրը մեր սրտի վերայ էլ պատուաստած լինէր, մենք ևս գործիչ կ'լինէինք։

— Ափսոս. բայց եթէ դիտակցաբար էք խօսում, դուք այդ սէրը կարող էք ձեռք բերել ինքնաշխատութեամբ. չէ որ ինքնաշխատութիւնը ձեր հասակում մի հրաշագործ տարր է, մի ամենարոյժ դեղ, որ կարելի է գործ դնել ամեն բարոյական հիւանդութեան դէմ և փրկութիւն գտնել?

— Մենք համոզվում ենք, որ ձեր ասածը լուրջ դատողութիւն է. մենք էլ աղնիւ խօսք ենք տալիս, որ այսուհետև կ'պարապենք զբաղանութեամբ, յետոյ և կաջակցենք նրան։

— Շատ ուրախ եմ. ցանկանում եմ աջողութեամբ սեպհականել ձեր լեզուի գանձերը և ձեր սիրելի ազգը լուսաւորել և առաջ տանել։ Դուք ահա տեսնում էք, որ հին գործիչներից շատերը արդէն գնացել են, իսկ մնացածների ուղեղը թուլացել ու մարմինը կակղել. նրանք ձեր ժամանակովն էլ չեն կարող ոգևորուել, որովհետև ձեր ժամանակի հետ չեն. հարկաւոր են նոր բողբոջներ։ Ձեզ յայտնի է, որ մեր զբաղանութեան մէջ տիրում է զարմանալի միակերպութիւն, մենք սիրում ենք գրել կրկնութիւններով. հարկաւոր է արարող զօրութիւն, կրթուած երևակայութիւն, որ կարողանան նոր հոսանք տալ

անհատի մոքին և հեռու պահել հեռևոդական սովորութիւնից։ Բայց, ներեցէք, կարծեմ, նոր սերունդից շատերն էլ մեզ հետ միասին թառամում են. նրանք, կեանքի շունչը կոխելով, ոչ թէ գործում են, ինչպէս հաւատացնում էին, գաղափարների յաղթանակի համար, այլ միայն իրանց գրպանը հաստացնելու։ Պատճառը այն է, որ նրանց դաւանանքը եկովի է. արևի շողքի պէս փոփոխական, ինչպէս հայաստանցին է ասում. «Ը-ոթէ պ-պ-ը, ը-ոթէ պ-պ-ը— էրդ-ովը դ-ա»! — Ինչ կասէք?

—Այդ մասամբ ուղիղ է. բայց ազգի մէջ շատ խաւարային խորշեր կան. արգելք են լինում երիտասարդ գործիչներին. հաց ու ջուր չեն տալիս. բայց և այնպէս մեր խիղճը թելադրում է մեզ ծառայել գեղարուեստին ու գրականութեան։

—Քաղցը է լսել, երբ մի երիտասարդ խօսում է մարգարէի ոգևորութեամբ. խոստանում է ծառայել հասարակաց շահերին. բայց աւելի քաղցր, երբ նոյն երիտասարդը, աշխարհ մրտնելով, գործում է այնպէս, ինչպէս խօսում էր։ Այն ժամանակ բերէք ձեր բուրաստանը և ծաղիկներով զարդարեցէք դրա անկաշառ ճակատը! Եթէ այդպէս էլ չլինի, մի վհատիր, ազնիւ երիտասարդ։ Թէ քո ազգը անկատար է, դու եղիր կատարեալ, միայն կատարելութեամբդ

չհպարտանաս և սովորական հուշակից ջլանաս, որովհետև գրականութիւնը սրբազործութիւն է և փառք ու պատիւ պարապողին! Այս այսպէս լինելով, պէտք է, որ պարապողն էլ փառք ու պատիւ բերէ նրան. հետևաբար հեղինակը, ինչպէս մի քուրմ պաշտօնեայ, պէտք է երկիւղածութեամբ պատրաստուի և մատուցանէ իւր գրական խորհրդաւոր ողջակէզը: Ամեն շարադրութիւն պէտք է ներկայացնէ մի աւարտած շինուած, որի մասերը պիտի ունենան ներդաշնակ առընչութիւն դէպի ամբողջը, իսկ լեզուն, որ լաւ գրութեան գլխաւոր պայմաններից մինն է, պիտի բարեխղճութեամբ մշակել, քերել, տաշել և հասցնել ազնիւ քարի գեղեցկութեան: Սրա համար հարկաւոր չէ շտապել ինչպէս. «Ով չուշտ, նա կուշտ», որ այս դէպքում միշտ քաղցած կ'մնայ. հարկաւոր չի մի քանի տողեր չանդռել թղթի վերայ և յանձնել տպարանին կիսակատար գործը. պիտի երկար ու բարակ մշակել, մի անգամ գրածը մի քանի անգամ ջնջել և նորից գրել: Եթէ աչքերդ մթնում են և միտքդ շաղվում, իզուր ես ճակատդ տրորում. թող գործդ և սպասիր, մինչև որ ինքը ոգևորութիւնը թելադրէ քեզ. — և այն ժամանակ ձեր դրչից, ինչպէս մի առատաջուր գետաբերանից, կ'թափուեն նազուկ և շարմաղ տողեր, մտքեր ու մտապատկերներ: Պէտք

է գրել ինչ որ մարդս կարող է և ոչ թէ ինչ որ ուզում է։

Թէ հրապարակախօսութեան մէջ և թէ գիտական ասպարէզներում առհասարակ ձեր տողերը ու մտքերը շարեցէք այնպէս, ինչպէս պատերազմից առաջ հմուտ զօրավարն է շարում իւր զինուորներին և, ամեն կողմից լաւ պատրաստուելով և միաբան յարձակուելով, տանում է փառաւոր յաղթութիւն։ Եթէ բերած օրինակիս չէք հաւանում, եղէք ինչպէս երաժշտապետ, որ մականը ձեռին զեկավարելով, քաղցրացնում է ձեր լսելիքը ստուածեղէն նուագածութեամբ! Ամեն հեղինակի գրուածն էլ այնպէս պիտի լինի, որ ամենատես Արդուս—կրիտիկոսը, անաչառ քրքրելով այն, բոլոր մասերով անխոցելի գտնի և ոչ թէ ընկուզի պէս ջարդի և ողջ տեղ չթողնի նրա մէջ!

Նոր սերունդ! չմոռանաք ձեր գիւղին էլ ակը տալ, նրա գութանին, նրա նիստ ու կացին, ուր գրած է ժողովրդական ոյժերի մագանը, թէև ինչպէս հում ապրանք, բայց մշակուելով գրական քուրայի մէջ, ստանում են հրաշալի գործադրութիւն։ Այսպէս էլ մետալեղէնների կոյտերը, քանի որ ծածկուած են հողի տակ, ոչ ոքի օգուտ չեն բերում, բայց յանձնուելով գործարանին և այնտեղ կազմակերպուելով, շարժում են բոլոր տիեզերքը ար-

դիւնարեր դարձուածներով։ Բայց գիւղական կեանքի մասին խօսելով, չենք ասում, որ դուք միանաք նրա տափակութեան հետ, այլ որ տանէք հասցնէք այն կեանքը կուլտուրական բարձրութեան։

Նոր սերունդ! չմոռանաք հայրենի սրբավայրին էլ ակը տալ, թէև աւերակ։ — Գեղեցիկ է ասում ռուս բանաստեղծը.—

«Սմայի տաճարն՝ էլի տաճար է,
«Կործանուած բագին՝ էլի բագին!»[1])—

Այնտեղ են դրած ազգային բարերարների ուզործիչների նշխարքը և այսօր ձեր կուրծքի մէջ կարող են կենդանի շունչ փչել, — այն, որ չէ կարող տալ ձեզ ոչ մի փիլիսոփայական դիտութիւն։ Այն աւերակները և այն նշխարքը, մեր դժբախտ անցածի վկայ լինելով, սերտ կը-կապեն ձեզ հայրենի յիշատակարանների հետ և թոյլ չեն տալ, որ մեր մէջ տարրանայ մի մեռելատիպ անտարբերութիւն դէպի հարազատ գրականութիւնը։ Վերջապէս դուք այդ աւերակների արձանագրութիւններից կիմանաք, որ մեր աշխարհը, հին ազգերի մի յայտնի մասի միջատահման լինելով, ամփոփում է իւր մէջ թանգա-

---

[1]) ...Храмъ оставленный — все храмъ,
Кумиръ поверженный — все богъ.

(*Лермонтовъ*).

գին հնախօսական մնացորդներ, որոնք մի կողմից ցոյց կ'տան ձեզ այն մարդկային ցեղերի խլրտումները և միւս կողմից՝ թէ ինչպէս ձեր պապերը հասել են այնտեղ և ազգով նստել։ Միայն վայրենի ազգերին և բոշաներին յատուկ է կապը կտրել անցածից և առօրեայ կեանքով բաւականանալ!

Լուսաբանելով անցածը, դուք գլխաւորաբար պիտի գործէք ներկայի համար, որովհետև այժմեան քաղաքաշինութեան սնունդ տուողը ներկան է։ Բաղմակողմանի և ծանրակշիռ հայեացքով պէտք է վերաբերուէք դէպի հասարակաց իրերի և երևոյթների պատճառները։ Եթէ ձեր գործողութեան ճանապարհին պատահէք կրքոտ կարծիքների կամ յարձակումների, լաւ է ուշ չդարձնել։ Բայց եթէ ձեր լռութիւնը նոր ոյժ է տալիս այն անարժան յարձակումներին, չեմ ասում, որ միշտ էլ սպունդի կամ լաթի պէս կակուղ մնաք. երբեմն էլ հարկաւոր է փակել ամբարտաւան բերանը և վերջ դնել նրա արշաւանքին։ Ցամենայն դէպս գործեցէք առանց որոտալու. հօ մեծ պարծանք չէ դարիդուսից դարիվայր ղղոններ թօղ անել և ահագին դղրդոցներ հանել։

Ահա թէ ինչքան ծանր հարցեր են դրած ձեր առաջև, ձեր տոգանդի ու ազնիւ յատկութիւնների առաջև, որ պէտք է լուծանէք։

Միայն սէր է պահանջվում դէպի ազգը, և գլխաւորը՝ ջերմ սէր աշխատելու, որովհետև աշխատութիւնը բարոյապէս և նիւթապէս սոված չի մեռնիլ. նրա ձեռները տոկուն են, կամքը երկաթի, միտքը դալար ու պտղաբեր, եթէ կամենում էք, երբեմն տաղանդից էլ գերազանց, որ շատ անգամ երես առած երեխի պէս անփոյթ է, այլև ծոյլ գործելու և սոեղծագործելու։ Եւ, հաւատացէք, որ ամեն դժուարութեան կյաղթէք!

Այս գլուխն էլ վերջացաւ, ոչ պեսիմիզմից և ոչ էլ օպտիմիզմից յափշտակուելով. բայց և այնպէս մենք մտածում ենք, որ եթէ այսօր մեր թարմ ծաղիկը գլուխը կախ է ձգել, սակայն դեռ առողջ արմատներ ունի հողի մէջ. էգուց կարող է զուարթանալ և արդիւնք բերել։—Այս պատճառով ողորմելի է այն հասարակութիւնը, որ իւր երիտասարդ սերնդից ձեռք է քաշում, մոռանալով, որ եթէ ծառի բողբոջները անխնամ կարատուեն, ինքը ծառն էլ երկար չի կարող դիմանալ։ Հասարակութիւնը, որ այդ սերնդի մէջ մեղքեր է նկատում, այնուամենայնիւ ոչ մի իրաւունք չունի օգնելուց փախչելու, որովհետև դրա մեղքերը մեր մեղքերն են, մեր ընտանեկան և դպրոցական մեղքերը։ Ուրեմն հրաժարուել մանուկ

սերնդից նոյն է թէ մահադեղ ընդունել և մանել գերեզման!

Ինչ անենք, որ փոքր ազգերը չհալուեն ժամանակիս լայնափոր և լայնարերան քուրայի մէջ?

Գլ. IX.

Բոլոր անցած զլուխներից տեսանք, որ շատ փոքր բաւարար միջոցներ կան մեզ հեռաքրքրող խնդրի համար: Բայց ահա նպաստաւոր են երևում ֆիլանտրոպիական և հնախօսական ընկերութիւնները: Իրաւի, ֆիլանտրոպիան, որին օտար են ազգային խարութիւններ և որի նպատակն է աջակցել տառապեալ մարդկութեան, օրէցօր լայն ծաւալ է տալիս իւր գեղեցիկ գործունէութեան և նոյնաչափ էլ զրաւում լուսաւոր հասարակութիւնների համակրանքը: Նա, յայտնի բան է, չի օգնում բախտաւոր մեծին, որ ամեն տեղ ապահով է, այլ միայն խեղճին, որի մարդկային արժանաւորութիւնը ոտնակոխ է արած: Այսպէս ֆիլանտրոպիական շրջանները, միշտ գթութեան կայծերով վառուած, ձայն են տուել նոր Բեթղեհեմի կատորածներին, որբերի խնամատարութեան և այն բոլոր ազէտներին, որ անպակաս են աշխարհի երեսից:

Նոյնպէս հնախօսութիւնը, որի նպատակն է անհետացած ազգերը, այսպէս ասել, նորից կենդանացնել ու հոգի տալից և ժայռերի երեսից նրանց քաղաքակրթութեան լուսնակերը հանել, միթէ կարող է հանգիստ տեղը նստել, որ այժմ այն հաղարաւոր գարեր ապրող ազգերին մեռցնեն ու թաղեն? Իհարկէ, որ այդ ընկերութիւնների, ինչպէս և բոլոր բարեկիրթ հասարակութիւնների թեւարկութիւնը անհրաժեշտ է հինօրեայ ազգերին հոմանաւորելու համար: Բայց ազգապահութեան ամենաղօրաւոր և ամենահաստատ միջոցը էլի ինքը ազգը պիտի լինի: Եթէ այդ ազգը դեռ ընդունակ է ինքնագործունէութեան, ոչ մի հալածանք ու արգելք չեն կարող խորտակել նրա հոգին: Այո, եթէ ամեն մի ազգ, ինչպէս և ամեն մի անհատ, այնքան ջանք գործ դնէ իւր առաջադիմութեան համար, որքան էլ նա գործ է դնում նիւթական բարեկեցութեան համար, անտարակոյս է, որ ոչ մի երկրաւոր թեհիղղերքուղ կամ Բելիար չի կարող արգելք լինել նրա ձգտումների յաղթանակին: Թող միայն այդ ազգը կենդրոնացնէ իւր ոյժերը, ուսումնասիրէ իւր լեզուն ու գրականութիւնը, առանց որոնց անօգուտ է օտարի մասնակցութիւնը, ինչպէս էլ անօգուտ է բժշկի դեղը հիւանդին, եթէ սա շարունակում է իւր հին մեղքերը—եւ այս-

տեղ եկաւ նստեց դրչիս վերայ մի չարագուշակ ագռաւ, որովհետև այդ բոլորը վերաբերելով մեր ազգին, դրա վերածող սերնդին և միւս դասակարգերին, տեսնում ենք, որ դրանց մէջ թոյլ է ազգային ինքնաճանաչութեան ոգին. մանաւանդ երեխաների կրթութեան վերաբերմամբ, որ մեր բախտաւորութեան գլխաւոր աղբիւրն է:

Քանի որ Եւրոպացիները ամեն օր գլուխ են ջարդում մայրենի լեզուի սէրը իրանց երեխաների մէջ զարգացնելու և փոխանորդաբար նրպաստելու ազգային առաջադիմութեան, մեր հայ ծնողները մի նոր մոխրաբոյս մանկավարժական սիստեմ են հնարել, որ իրանց զաւակների սրտում մայրենի լեզուն մեռցնեն: — Նրանք ասում են. հայերէն խօսելու ու պարապելու համար, ամենևին հարկաւոր չէ հայերէն խօսել ու պարապել, որովհետև այդ ինքը իրան էլ կ'գայ յետոյ. որպէս թէ առանց երեխայի հետ պարապելու, նա կարող է հայերէն խօսել ու գրել-կարդալ սովորել! [1]).—մի հանդամանք, որ

[1]) Պրուսաց կառավարութիւնը շատ անբաւական է, որ Պոզնանի Լեհացի կանայք պէսպէս հրապոյրներով Գերմանացի երիտասարդների խելքն են տառնում և, մարդի գնալով, իրանց զաւակներին ազգային կրթութիւն են տալիս. Մենք մեր հայուհիներից այս չենք պահանջում, այլ որ իրանց երեխաներին հրապուրեն դէպի հայութիւն! Նոյնպէս բարի խորհուրդ ենք առաջարկում մեր երիտասարդներին, որ

սուր և երկար ասղի պէս ծակոտում է մեր ուղեղը։ Ոչ, պէտք է հրաժարուել այդ անբնական եղանակից. մայրենի լեզուի առաջին ստեղծագործող դաստիարակը ծնողները պիտի լինեն և ոչ թէ դիտումամբ կամ անդիտումամբ օտարացնեն այդ լեզուն և թունաւորեն ազգի ներկան ու ապագան։ Անկասկած, մեր մէջ էլ կան լուսաւոր հայրեր ու մայրեր, բայց մեր խօսքը վերաբերվում է այն զարմանալի խելօք և կրթուած հայերին, որոնց մասին կարելի է ասել, որ ամենակարող Աստուած, ստեղծելով աշխարհ և մարդկութիւն, առաջ նրանց կանչեց և առաջին խելքն էլ նրանց տուաւ, որ ամենից առաջ իրանց լեզուն մոռանան և օտարանան! Ահա այս էր այն սև զուշակութիւնը, այն բախտի դատավճիռը, որ դրոշմած է այդտեսակ հայերի ճակատին։ Ձեզ եմ ասում, արթուն կացէք. ուր չկայ լեզու և դրականութիւն, մեռած կեանքի յարութիւն էլ չի կարող լինել!

Ասացէք, ինչ անենք, որ փոքր ազգերը չհալուեն ժամանակիս լայնափոր և լայնարերան քուրայի մէջ?

զգուշանան զանազան «ուղիներից» ամուսնանալու նպատակով, մանաւանդ երբ այդ ամուսնութեան մէջ չի զգացվում փոխադարձ սիրոյ մրմունջ կամ կսկիծ, որովհետև սէրը առանց տանջելու ու տանջվելու սէր չէ, այլ առևտրական լոկ հաշիւ։

Մանոթ. գլ. II, երես 13. «Զորոց ձանձրացուցանէին բազմածառայքն զանծառայիցն զդուրս, խընդրելով հանապազ զմիս այլ և այլ որսոց». Ղ. Փ.։ Այս նախադասութեան մէջ «բազմածառայք» բառը պէտք է վերագրել նոյն իսկ բազմածառայ իշխաններին կամ նախարարներին և ոչ թէ նրանց ծառաներին, ինչպէս վերը տպած է։

Մանոթ. գլ. II, երես 14. «Վրաց Աշուշա թագաւորի հոգատարութեամբ». պէտք է կարդալ. «Վրաց Աշուշա բդեշխի կամ իշխանի հոգատարութեամբ».